



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԵ · 1866 · ՔՍԱՆԵՐՈՐԴ · ԶՈՐՐՈՐԴ · ՏԱՐԻ · — ՄԱՅԻՍ

ԴԴՄԵՆԻՆ ՑՈՒՆԱՆՈՒ

Այս առակաւոր ծառիս յիշատա-  
կը կարծեմ ծանօթ է հասարակաց .  
բայց եթէ գտուի անտեղեակ մ'ալ՝ հա-  
մառօտիւ ծանուցանենք , որ իր բուսած  
տեղն էր հիմակուան Մուսուլի մօտ՝ հին  
Նինուէի քով . աս էր Ասորեստանեայց  
տիեզերակալ տէրութեան մայրաքա-  
ղաք՝ և այն ատեն Ասիս ամենէն մեծ  
և ծաղկած տեղն ըլլալով (որուն վկայ  
են մեր օրերա հոն գտուած հին շէնքերն  
և քանդակիք) , շուպյութեան , զեղսու-  
թեան և անօրէնութեանց ալ մեծ կեն-  
դրոն մ'էր եղած . որով և դայթակիու-  
թիւն աստուածապաշտ Հրէից , որք գե-  
րուելով իրենց երկրէն՝ հոն կը քշուէին .  
Ուրիշ այսպիսի մեծամեծ քաղաքաց  
պէս՝ ասոր ալ աւերման և կործանման  
պատիժ պատրաստեր էր Աստուած .  
բայց իր ողորմութեամբը գեռ խնայելով  
պատոփրեց Յովսան մարգարէ՛՝ որ եր-

թայ հոն , իմացընէ քաղաքացեաց ի-  
րենց վրայ գալի չարկըր , եթէ իրենց  
անկարգ ճամբէն յետ չկենան : Մար-  
գարէն , մեզի պէս տկար մարդ մը , վախ-  
ցաւ այս ծանր պատգամաւորութիւնը  
կատարելու . և փոխանակ Աստուծոյ ի-  
մաստութեանը վստահանալու , իր խել-  
քով ապահով և միջին ճամբայ մը կար-  
ծեց՝ ոչ իր տեղը մնալ , որ անհնազանդ  
չերկի , և ոչ ալ 'ի Նինուէ երթաւ , որ  
սուտ կամ չարեաց գուշակ չերկի , եթէ  
Աստուած խնայէ քաղքին ու չկործա-  
նէ : Նաւով փախչիլ ուղեց հեռի աշ-  
խարհ մը . ծովը խոռվեցաւ , նաւա-  
վարքն վախցան , քննեցին իմացան որ  
կարգէ դուրս է այս ալէկոծութիւնը և  
նաւուն մէջ եղողաց մէկուն յանցանաց  
համար է . որ և ինքզինքն իրմէ ալ ամեւ  
նէն ալ ծածկել ուղելով «իջեալ 'ի խորշ  
մի նաւին ննջէր և խորդայր » : Արթըն .

ցուցին սուտ կամ իրաւ քուն մարգարէն . չկրցաւ ծածկել իր յանցաւոր ըլլալը , և իր պատիժը յանձն առաւ . ձգուեցաւ 'ի ծովն , որ մէկէն հանդարտեցաւ . անոր մեծահասակ լուղակաց մէկն՝ կէտ ծուկն՝ մէկ պատառ մնի պէս կլեց զբովսան , (որուն այն կենդանի բանտին մէջ ըրած ճնշողական առաջնարտիւմը հոս չեմք քններ) , և տարաւ փսխեց հանեց 'ի ծովեղն : — Նոր յաշխարհ եկած մարգարէն մէկէն Միջագետաց և Տիգրիս գետոյ ճամբան բանեց , եկաւ մոտաւ 'ի Նինուէ , սկսաւ վեր վարողել թէ իրեք օրէն այս մեծ քաղաքը հիմնայատակ պիտի կործանի իր բնակչաց մեղացը համար : — Քաղաքացիք՝ մեծ ու պատիկ , ինքնակալէն սկսեալ մինչև յետին ստրուկն , սարսափած հաւատացին , սկսան վախնալ Աստուծմէ , և ջանալ դղմամբ անոր բարկութիւնը վրանէն անցընելու . ինչուան անսանոց անդամ կերակորը կարեցին իրեք օր , որ քաղքին հոգէ վարութեան միջոց էր արուած :

Այս միջոցին Յովիսան ըլլալիքը ըլլալ լիքը գիտելու համար՝ ելաւ քաղքին գլխաւոր գոնէն՝ դիմացը նստաւ քիչ մը հեռու , քանի մը փայտէ ծածքիտակ , որ բաւական չէր զինքը Ասորեստանի բարկ արեէն պաշտպանելու . Աստուծ գիմալով այն մաղծոս մարգարէն՝ ուղեց՝ և ահա Դդմենի մը բուսաւ , ելաւ բարձրացաւ շուտով ծածկեց Յովիսանու զլուկը , և զովարար շուք մ'ըրաւ . Մարգարէն ախորելով պատսպարուած անոր տակ , իրբէ թատերական նստակայից մէջ հանդչած կը սպասէր ողբերդական մեծ տեսարանին բացուելուն : — Թողունք զինքն իր ակնկալութեանը , և մենք քնննենք իրեն յանկարծաբոյս հովանարար :

Մէկ զիշերուան մէջ բումող աճող և հովանոց մը ծածկուլ ծառը՝ հարկաւ բնական զօրութեամբ կամ օրինաք չէր . և որչափ ալ երագարցոյս տունկեր գրտուին , նաև գդմենեաց ցեղէն , սակայն այշափ շուտ աճող մը չկայ . ուրեմն անտարակոյս ասիկայ գերբնական զօ-

րութեամբ կամ բնութեան տիրոջ կամքն էր բուսած և աճած : Բայց քըննողաց խնդիրը բուսակին վրայ է . ասիկայ բուսողութեանը նման հրաշակերտ և նորանշան բայս մը չիկարծուիր , հապա բնական և ծանօթ բայս մը , զոր Ս. Գիրքն ըստ մեր հայերէն և յունարէն թարգմանութեանց , նաև հին լատիներէնին (կամ յտալականին) Դդմենի կ'անուաննեն . և այս անուամբ ամենքը կը ճանչնան ծանօթ դուռմի բոյսը . իսկ հիմկուլ լատին (Վուկաղա) թարգմանութեան մէջ բայեղն դրուած է , որ առջի բերան Դդմենի լսել վարժողայ՝ գայթակղելի երեցաւ . իսկ երբայական բնագիրն քիքայուն կ'անուանէ զրոյսը , որ ըստ այժմու հասարակ ընդունելի կարծեաց է Յունաց քիքի անուանեալն , և Լատինաց Րիչուս<sup>1</sup> ըստծն , որոյ պտղէն կամ հատերէն (զոր մեր նախնիք Սրունունիդ կոչեն) մաքրողական կամ լուծիչ եղը կը հանեն : — Ասիկայ ալ շուտ աճող և բարձրացող ծառածե բայս մ'է , որ լայն ու թաթածե տերեւներ կ'արձեկէ , յարմար հովանի ընելու և հովահարի ալ ձեռվ : Բայց որովհետև Հայք և Թօնկք և ուրիշ արևելեայց ոմանք ալ դդմենի գիտեն այն հովանարար բոյսը , միշտ գդումի բայս կը համարին զայն . և Յովնանին ուրիշի վրայ անցնելով՝ չեն կըրնար առանց կախուած գդումներու երեակերպել այն բոյսը . և երբամն գդումն և զլուկն իրարու շիոթել և միացընել . և պարզապէս՝ ախմար և քիչ մտածող կամ գիտցող զլուոց՝ դդուռ ըսել . իսկ պարծենկոտ քիչ գիտողաց կամ ինքնակարծ գիտնոց՝ գդմոյ ծաղկի պէս ծաղկած , և այլն : Այս զրոյցը նոր չէ . Ս. Եփրեմ ալ կ'ըսէ այդպիսեաց համար , թէ երեկուան սովորող մանկունքն՝ այսօր Յովիսանու գդմենւոյն պէս ծաղկեցան : — Բայց մեր այսօրուան տեսովթիւնը Յովիսանու գդմենւոյն այս աշխարհածանօթ մասին կամ այս նմանութեանը համար չէ , հապա քիչ մ'ալ վերջինին . որոյ համար պէտք է նորէն գառնանք առ մարգարէն :

Հաւանօրէն ամբողջ օր մը վայելեց Յովիսան իր հովանին, որուն ճշերուն միջն պահ պահ կը նայէք Նինուէի վըրայ. Երբեմն հաստատ միտքը զնելով որ քաղաքը պիտի չկործանի, երբեմն ալ տարակուսած ձանձրացած ատեն՝ Երբ զլայն վրայէն բայսը շարժելով շուքերը կ'երեցընէր, վայրիեան մը կը կարծէր թէ ահա Նինուէի աշտարակները կը շարժին, գլուխնին իրարու կուդան, ինքն ալ իր գրուխը կը շարժէր: Ասանկով անցաւ օրն ու գիշերը. անդամ մ'ալ լուսացաւ, արևը բարձրացաւ, սկսաւ տաքութիւնը ազդել, Յովնանու զլուխը (որ գուցէ ճաղատ ալէր) սկսաւ ճաթիլ տաքէն. վեր նայեցաւ թէ ինչու չի գոլացըներ իր հովանին. և ահա երեկուան դալար դդմենին այսօր քաշուեր, ցամբեր, չորցեր, մոխրագոյն դարձեր, շուք մը տալու անդամ անպիտան է եղեր... պղտի որդի մը կը րծեր էր բայսին բռնը և ամեն բան լմինցեր էր: ... Եթամոռ և կամապաշտ ողու պէս տեղէն շարժելով կը գանգրատէր կուլար մարգարէն իր կորուած հովանւոյն վրայ. և հոս մեռնիմ երթամ կ'ըսէր. մէկ դդմենւոյ հովանի մ'ալ վայելու արժանի չեղայ, և այն: Այն ատեն Աստուած իրմէն հարցուց, թէ իրաւ այդպէս շատ տրտմած ես ատոր վըրայ: — Շատ, շատ, ըսաւ մարգարէն, մահուան չափ տրտում եմ: Նինուէ չկործանեցաւ՝ իմ պատիւ կորուսի՝ դդմենին ցամաքեցաւ, իմ հանգիստս կորուսի: — Զարմանք է, ազդեց Աստուած, որ դուն այդչափ կը ցակս քեզի շարժուն չուք մը տուող դդմենւոյ մը վրայ, որուն տնկելու և մեծցընելու համար ալ չաշխատեցար, առջի գիշերուան մէջ ելաւ, երկրորդ գիշերուան մէջ կորաւ. իսկ ես կ'ուզէիր որ չխնայեմ այդպիսի մեծ քաղքի մը՝ որուն մէջ միայն 120,000 անփորձ տղաք կան և անբաւ անմնաս կենդանիք:

Հոս կը լմինցընեն Ս. Գիրք Յովիսանու պատմութիւնը և առակը: Որուն պէսպէս դիպուածներէն և պատկերներէն ամենէն նման և շատ անդամ նմա-

նած կ'երկին ինծի յուսացողքն և խնդացողքն իրենց վրայ տեսակ մը հովանի ընողին, որ խիստ շատ անդամ դդմենոյ մը հովանիէ աւելի չէ: իւ ինչպէս անբաժանելի է շուքը շուքընողին, կամ հովանին 'ի դդմենիէն, անոր նման իրենց մողէն և սրտէն անբաժանելի ունին յոյս մը, փափագ մը, ընելու բան մը, որուն համար կը կարծեն թէ կ'ապրին, և առանց անոր կեանկերնին պարապ պիտի մնայ և անցնի: Ասոր համարքագք քաղաք, աշխարհէ աշխարհք ալ կ'երթամն, կը պտըսին կը դառնան, միշտ իրենց հովանարար դդմենին հետերնին. միշտ նոյն յուսով նոյն նպատակաւ: Երբար նատած առանձին կը մոտածեն ընելու մեծ մեծ բաներուն վըրայ՝ դդմենւոյն շուքին տակն են. թէ որ յանկարծ բարկ արե մը խայթէ, հակառակ զիպուած մ'ենէ, կ'ապաւի նին իրենց հովանւոյն. ինչ վտանգ կամ դժարութիւն ալ դէմ կանգնի, ողջ կենայ դդմենին. քանի որ անոր զովարար շուքը զլուխնին կը ծածկէ, իրենց բաղդը բաց է: Անոր համար այնպէս պինդ ու սերտ կպած են անոր, — իրենց մոտաց ու սրտին փնտուածին, — որ կարծես թէ շուքէն աւելի իրեւոք ինկնին գլխովին կպած են զդմենւոյն: Կ'ըլլայ երգեմն որ զդմենւոյն տերեներէն առաջ իրենց գլխուն տերեները (մազերնին) կը խամբի, կը ճերմբկնայ. գեռ իրենք իրենց շատ տարուան մոտածած և փափագածը պիտի կատարեն. զեռ դդմենին կը հովանանայ անոնց ճօճ ու ջոջ գլխուն վըրայ: . . .

Բայց օր մ'ալ յանկարծ այդ զլուխնին կը տանչի. արեւ կը զարնէ կը խարշէ. երկայն ատեն և տարիներ զիրենք պաղտըրկընող հովանին՝ փափսեր անցեր է, տկլոր կը մնան: Վասն զի « հրաման ետ Աստուած որդանն 'ի վաղիւ անզր, և եհար, և ցամաքեցաւ դդմենին». Դդմենին, — այն յուսադիր բարեկամն կամ պաշտպանն, ջատագովն կամ շողոքորթն, խաբողն կամ խաբուողն. — այն իրաւ կամ սուտ գիտութիւնքն և հանճարն, ստակն և հարստութիւնն,

ոյժն և առողջութիւնն, հասակն և ձիր-քերն, ջորոնք յանկարծ մէկ գիշեր մը կամ առտու մը կը զարնէ ոչ ինչ բան մը, պղտիկ որդ մը . - դիպուած մը, դը-բաղդութիւն մը, տնանկութիւն և սը-նանկութիւն, ծուռ կամ շիտակ խօսք մը, կիրք մը, ձանձրութիւն մը, հիւան-դութիւն մը . - վերջապէս միշտ ատենէ

դուրս կարծուած ատենն . այն անակըն-կալ և անտանելի և ամենամանր ամե-նամուտ որդն, որ ամեն մեծ և կարծր բան ալ կը կրծէ կը կործանէ ... մահն: « Եհար, և ցամաքեցաւ դժմենին . . . ի » գիշերի ել, և 'ի միւս գիշերի կորեաւ»:

Փ. Փ.

## Ի ՀԻՒԳՆ ՄԱՅԻՍԻ \*



Ոչ եւս է նա . որպէս ի տալ իւր ըզհառաչ օրհասական եկաց անշարժ դիմակն ապուշ եւ յայնքանոյ շընչոյ թափուր, Այսպէս երկիր ի գոյժ մահու նորին հարեալ կայ յապշութիւն, Լուռ մըտայոյզ ի ժամն յետին առնըն՝ զոր ետ ճակատագիր, Ոչ գիտելով թէ երբ արդեօք հանդոյն իմն հետք մահկանացուի Գայցէ անդրէն կոխել զիւրեւ ըզշաղախեան արեամբ փոշի :

Ըզնա ի գահ ճաճանչաւէտ տեսեալ ոդին իմ եկաց լուռ . Եւ յանկանել նորա և հետ ընդ հետ յառնել եւ կործանել, Բիւրուց ձայնից զիւրն ի հնչիւն նա հրաժարեաց ի խառնելոյ . Այլ կոյս ի ստրուկ ներբողենից, այլ կոյս ի վատ թըշնամանաց . Արդ ի նուաղել յանկարծ մեծի փայլմանն՝ յառնէ ի գութ շարժեալ, Եղերերդել զիւրով շիրմաւ երդ որ կեցցէ թերեւս անմահ :

ՅԱԿՎԵԱՆԳ սարից մինչ ի յՈւրանս, ի Հուենոսէ ցըՄանսանար, Անվրէպ աջոյն այնորիկ շանթ սպացեալ ըզհետ փայլատական, Եւ ի Սկիլայ ցըՃանայիս ճայթեաց ծովէ մինչեւ ի ծով: Եղեն արդեօք փառք ճըշմարիտ . - յետնոց վըճիոն այն դըժուարին . իսկ մեզ խոնարհ երկըրպագել գերագունի կամաց իին, Որ լայնատարը ի նմա դրոշմեաց զարարչական հոգւոյն պատկեր :

Մըրըրկածուփ եւ սըրտատրոփ խընծիղ ընդ մեծն իւր առաջարկ, Անձուկ սրտի՝ որ անըմբեր եռայ ի գահ մըտարերեալ, Եւ հասանէ անդր ըմբոնէ ըզմըրցանակն անյուսալի:

\* Այս նիւթոյս վրայ ոտանաւոր յօդուած մը ևս այլ կը գտուի բազմավայիս մէջ, զոր եղերերքած է գաղղեացի ազգային մեծահուշակ քերթողն՝ Պէտանժէ. իսկ այժմեան հրատարակածնիս է Խտակոյ անմահական քնարի մը որ է Մանցօնի, զոր երգած է՝ ասկէ 48 տարի յառաջ : Տես հա . Ը . յեր . 180 :